ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ. Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, *Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:*

Հայաստանի Երրորդ Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շուրջ 22-ամյա պատմության գիտական լուսաբանմանն է նվիրված ճանաչված պատմաբան, պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանի ստվարածավալ աշխատությունը: Հենց սկզբից պետք է արձանագրել, որ ուսումնասիրությունն աննախադեպ արժեքավոր ներդրում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անկախ պետությունների պատմության գիտական լուսաբանման գործում:



Է. Մինասյանի աշխատությունը հայ պատմագիտության մեջ, քննարկվող ժամանակահատվածում, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների պատմության հնարավորինս ամբողջական պատմաքննական լուսաբանման և վերլուծության առաջին փորձն է, երբ հայկական երկու հանրապետությունների պատմությունը լուսաբանվում է որպես հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում, այդ թվում՝ պետաիրավական, ազգային, հոգևոր, համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելու և երկրի ներքին ու արտաքին կյանքի կարևոր այլ բնագավառներում ծավալված գործառութային առումով սերտորեն կապված, միմյանց փոխպայմանավորող նպատակային միջոցառումների միասնական համակարգ:

Հետազոտության խնդրո առարկա ժամանակահատվածում երկու հայկական պետությունների կայացման փորձի ուսումնասիրումն ու լուսաբանումը մեր օրերում ազգային ինքնիշխանության ամրապնդման նպատակով իրականացվող բազմաբնույթ ձեռնարկումների շարունակականության պայմաններում առանձնակի իմաստ է ձեռք բերում: Այսօր, երբ անկախության կերտման ուղիով ընթացող հայ ժողովրդի առջև ծառանում են հրատապ լուծումներ պահանջող նորանոր խնդիրներ, անհետաձգելի է դառնում ազգային պետականության հաստատման և զարգացման նպատակով իրականացված ձեռնարկումների ընթացքում կուտակված ինչպես դրական փորձի, այնպես էլ թույլ տրված սխալների, բացթողումների գիտական ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Աշխատանքում քննարկվող թեմայի արդիականությունը զգալի է հասարակության ներքին ու արտաքին կյանքի տարբեր ոլորտներում, մանավանդ, որ նորօրյա շատ խնդիրներ իրենց արմատներով ձգվում են մինչև անկախության կերտման գործընթացի ամենասկզբնական ժամանակները: Տնտեսական կյանքում պետության դերակատարություն, ազգաբնակչության սոցիալական կացություն, նորանկախ երկրի հասարակական-քաղաքական կյանք, պետական շինարարություն, հայ-ադրբեջանական ձգձգված առճակատում, անկախության ողջ ընթացքում երկրին ուղեկցող շրջափակում, տակավին ձևավորվող միջպետական հարաբերություններ, համագործակցություն միջազգային կառույցների հետ և այլն, ահա նորանկախ հայկական հանրապետությունների կյանքի թերևս ոչ բոլոր հարթությունները, որոնց առումով, կարծում ենք, անվիճելի է նման հետազոտության հրատապությունն ու արդիականությունը:

Աշխատանքն աչքի է ընկնում իր փաստառատությամբ: Հեղինակը, առաջնորդվելով պատմական նյութի լուսաբանման և վերլուծության մեթոդոլոգիայով, հետազոտությունն իրականացրել է պատմության ուսումնասիրության համակողմանիության կարևորագույն սկզբունքով, որը մերժում է հատուկենտ, շատ հաճախ ոչ համոզիչ փաստերի, մի կերպ կորզված եզակի օրինակների վրա հիմնված և այդ պատճառով որպես կանոն՝ իրողությունից հեռու տեսականների ու դրույթների առաջադրումը:

Օգտագործելով մեծ քանակությամբ սկզբնաղբյուրային նշանակության նյութեր՝ արխիվային նորահայտ փաստաթղթեր, տպագիր աղբյուրներ, փաստաթղթերի ժողովածուներ, ամենաբազմազան տեղեկագրեր, զեկույցներ, վիճակագրական տարաբնույթ հրատարակություններ, մամուլի հրապարակումներ, թեմային վերաբերող հայերեն և օտարալեզու գիտական գրականություն՝ Է. Մինասյանը համակարգված ներկայացրել է նորանկախ հայկական պետություններում ծավալված առավել էական բնույթի գործընթացները:

Անվիճելի գիտական նորույթ են ներկայացնում աշխատության գրեթե բոլոր բաժինները: Բացառություն չի կազմում աշխատանքի բավական ընդարձակ ներածությունը (47 էջ), որում հեղինակն ամենայն բարեխղճությամբ, առաջին անգամ ամբողջականորեն ներկայացրել է հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը՝ մեկ առ մեկ անդրադառնալով և արժանին մատուցելով տարբեր հեղինակների՝ քննարկվող հիմնահարցին այս կամ այն չափով առնչվող աշխատանքներին:

Հետազոտության մեջ պաշտպանվում է այն տեսակետը, որ նորանկախ հայկական պետությունների ղեկին հայտնված քաղաքական ուժերը ստիպված էին զուգահեռ և՛ սովորել, և՛ միաժամանակ ներքին ու արտաքին դժվարագույն պայմաններում կիրառել շատ դեպքերում միայն թերացումների դառը փորձով ձեռք

բերված հմտությունները: Հեղինակը զարգացնում է այն դրույթը, թե ինչպես ողջ հայ հասարակությունը, այնպես էլ փաստացիորեն երկիրը ղեկավարող քաղաքական ուժերը, այնուամենայնիվ, կարողացան հաջողությամբ դիմագրավել այդ շրջանի հիմնական մարտահրավերներին:

Է. Մինասյանը, հավատարիմ մնալով հիմնահարցի լուսաբանման պատճառահետևանքային սկզբունքին, ուսումնասիրության շարադրանքը սկսել է դեռևս ԽՍՀՄ-ում ծավալված վերակառուցման ժամանակաշրջանից՝ վերլուծելով այդ գործընթացի ունեցած վճռորոշ դերակատարությունը խորհրդային երկրում և, մասնավորապես, Հայաստանում ծավալված հետագա զարգացումների վրա:

Աշխատանքի շահեկան առանձնահատկություններից մեկն էլ, անշուշտ, այն է, որ նրանում վերլուծված են Արցախյան գոյամարտի բովում ծավալված հիմնական իրադարձությունները, որոնք էլ, ըստ էության, հանգեցրին հայկական երկու պետականությունների առաջացմանը:

Փաստառատ նյութի օգտագործմամբ հեղինակը հանգամանորեն անդրադարձել է ՀՀ-ում և ԼՂՀ-ում պետականաշինության, հասարակական-քաղաքական ազատական հարաբերությունների հաստատման գործընթացներին:

Հետազոտության մեջ հանգամանորեն վերլուծվել-լուսաբանվել են անկախության հռչակումից հետո ավելի քան քսան տարիների ընթացքում ՀՀ-ում և ԼՂՀ-ում շուկայական տնտեսակարգի ձևավորման ուղղությամբ իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները: Հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել ինքնիշխան հայկական պետությունների կողմից ազգային արմատական շահերից բխող տնտեսական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացները:

Ուսումնասիրության մեջ Է. Մինասյանը մանրակրկիտ անդրադարձել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում իրականացված արմատական վերափոխումներին, երկու հանրապետություններում վարվող ֆինանսավարկային քաղաքականության առանձնահատկություններին, սոցիալական ոլորտում պետության դերակատարության հարցերին և այլն: Ընդհանուր առմամբ անկողմնակալ ուսումնասիրությունում ներկայացվել են անցման շրջանում ՀՀ-ում և ԼՂՀ-ում տնտեսական վերափոխումների արդյունքում ունեցած ինչպես ձեռքբերումները, այնպես էլ բացթողումները:

Ինչպես աշխատանքի մյուս մասերում, այնպես էլ տնտեսությանը վերաբերող բաժնում, հեղինակի կողմից բծախնդիր վերլուծության արդյունքում, հայկական ազգային պետականությունների պատմության ուսումնասիրման բնագավառում, ըստ էության, առաջին անգամ արվել են չափազանց արժեքավոր մի շարք հետևություններ, որոնք պատմագիտական հետազոտության նոր ուղիներ են նախանշում հայկական պետականությունների ընթացքի ուսումնասիրման ճա-

նապարհին: Աշխատանքում փաստառատ շարադրանքով հեղինակը հիմնավորել է, որ տնտեսության ամբողջական վերափոխման ընթացքում թույլ տրված սխալների օբյեկտիվ բնույթի հիմնապատճառների հետ մեկտեղ վճռորոշ են եղել նաև մարդկային գործոնով պայմանավորված նախադրյալները: Մասնավորապես, ուսումնասիրության մեջ պատմաբանը, միանգամայն իրավացիորեն նկատել է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանության հասած քաղաքական ուժերը թերագնահատեցին, հատկապես անցման շրջանում, հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ տնտեսության բնագավառում պետության կարգավորիչ, ուղղորդող դերակատարությունը:

Է. Մինասյանի ըստ էության հանրագիտարանային բնույթի բազմապլան աշխատանքի կարևորագույն արժանիքներից է նաև այն, որ հետազոտության մեջ նա առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է Հայաստանի Երրորդ Հանրապետության ներքին և արտաքին կյանքի գրեթե բոլոր ոլորտներին, նաև մշակութային կյանքին, գիտությանն ու կրթությանը, առողջապահությանը, հայրենիք-սփյուռք հարաբերությունների ընթացքին, հոգևոր-եկեղեցական կյանքի վերազարթոնքին, նորանկախ Հայաստանի միջազգային ճանաչմանը և արտաքին հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը վերաբերող բազմաբնույթ հիմնահարցերին:

Ուսումնասիրության մեջ առանձնակի ուշադրություն է դարձվել արցախահայության ազատագրական պայքարին, նորանկախ Հայաստանի բազմակողմանի աջակցության լուսաբանմանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ իրականացված ձեռնարկումներին:

Առանց վարանելու կարող ենք արձանագրել. «Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն» ուսումնասիրությունը ոչ միայն ՀՀ և ԼՂՀ խնդրո առարկա ժամանակահատվածի պատմությանը նվիրված, ըստ էության, ակադեմիական բնույթի առաջին ծավալուն հետազոտություն է, այլև նրանում առաջադրված հիմնախնդիրներով, ներկայացված հարցադրումներով, հիմնահարցի լուսաբանման առանձնահատուկ մեթոդոլոգիայով կայուն ուղի է հարթում հայկական երկու պետականությունների պատմության հետագա ուսումնասիրման համար:

ԷԴՈՒԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆ